

4203

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՂ.



Խ. ԴԱՆԵԼՅԱՆ

**ՔԱՂԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
Ի ՐԱՎՆՈՒՆՔՆԵՐԻ
ՅԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**



1870

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1870

Խ. ԴԱՆԵԼՅԱՆ

H 38179
 ԲԱՂԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
 Ի Ր Ա Վ ՈՒՆ Ք Ն Ե Ր Ի
 ՅԵՎ
 ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՄԱՍԻՆ

★



Գլավիտ № 441.

Պատկեր № 840.

Տիրած 3000

Պետերսբերգի տպարան — Յերևանի Սրբազր. Ա. Լաւրկերդյան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՔԱՂԵՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ 7-ԻՑ

(Հաստատված ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահության նիստում 1984 թ.
հունվարի 4-ին)

ՔԱՂԱՔԱՐԵՐՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԳԱՄՆԵՐԸ ՍԵՎ ԱՆՁՆԵՓՈԽԱՆՈՐԴՆԵՐԸ

40. Քաղաքային խորհրդի անդամը պետք է սոցիալիզմի կառուցման առաջավոր մարտիկը լինի և իր որինակում կաղմակերպի աշխատավորական մասսաները՝ սոցիալիստական շինարարության խնդիրներն իրականացնելու համար:

Քաղաքային խորհրդի անդամը պարտական է՝

ա. Ակտիվ մասնակցել քաղաքային խորհրդի և նրա որդանների աշխատանքներում, կատարելով նրանց տրված հանձնարարությունները:

բ. Ձեռնարկել բոլոր միջոցները՝ իրագործելու ընտրողների հրահանգները, մշտական կապ հաստատել ընտրողների հետ, հանձնելով քաղաքային խորհուրդ և այլ որդաններ նրանց առաջարկությունները, հայտարարությունները և դանդաատները:

գ. Հաշվեզեկույց է տալիս ընտրողներին վոչ պակաս քան տարին յերկու անգամ, լուսաբանելով հաշվեզեկույցներում խնչպես քաղաքային խորհրդի և նրա որդանների, նույնպես և իր վորպես խորհրդի անդամի գործունեյության մասին:

դ. Ստուգում է որենքների, վերադաս որդանների կարգադրությունների և քաղաքային խորհուրդների վորողումների կատարումը և հայտնում է ձեռնարկության և հիմնարկության մեջ նկատված անկանոնությունների մասին:

41. Քաղաքային խորհրդի պատգամավորին ընտրողներն իրավունք ունեն ամեն ժամանակ հետ կանչել նրան: Պատգամավորին հետ կանչելու հարցը կարող է վորոշվել հերթական կամ հատկապես այդ նպատակով հրավիրված ժողովներում՝ յեթե ներկա յին ընտրողները 40 %-ը: Հետ կանչելու վորոշումը ընդունվում է ձայների պարզ մեծամասնությամբ և համարվում է վերջնական:

42. Քաղաքային խորհուրդները չեն կարող քաղաքային խորհրդի անդամներին լիազորությունից զրկել, բացի այն դեպքերից, յերբ նրանք զրկվում են ընտրական իրավունքից, սակայն պարտական են ընտրողների առաջ հարց բարձրացնել հետ կանչելու առանձին պատգամավորների, յերբ նրանք իրենց դործունեյության ընթացքում աղավաղում են պրոլետարական դասակարգային քաղաքականությունը, խախտում են հեղափոխական որինականությունը, սխտեմատիկորեն չեն կատարում պատգամավորական պարտականությունները, չեն ձեռնարկում միջոցներ՝ իրականացնելու ընտրողների հրահանգները և թույլ են առլիս պատգամավորին անվայել արարք:

43. Քաղաքային խորհրդի անդամը՝ պատգամավորական պարտականությունները կատարելու համար իր մանդատը ներկայացնելով՝ ազատ մուտք ունի քաղաքային խորհրդի սահմաններում գտնված հիմնարկություններն ու ձեռնարկությունները և նրանց պաշտոնյաների մոտ, այլ և իրավունք ունի պահանջել տեղեկանքներ և բացատրություններ բացառությամբ գաղտնի բնույթ ունեցող տեղեկությունների, վորոնք ստանալու համար պահանջվում է քաղաքային խորհրդի նախագահության թույլտվությունը:

44. Քաղաքային խորհրդի անդամները չեն կարող ձեռքակալվել, առանց դրա մասին տեղեկացնելու քաղաքային խորհրդի նախագահության կամ նախագահին:

45. Քաղաքային խորհրդի անդամները, վորպես կանոն, իրենց պատգամավորական պարտականությունները կատարում են արտաքինվորական ժամերին: Բացառիկ

դեպքերում յերբ քաղաքային խորհրդի պլենումի կամ
նախագահության նիստերը նշանակվում են քանվորա-
կան ժամերին՝ այդ հիմնարկությունը կամ ձեռնարկու-
թյունը, վերտեղ աշխատում են քաղաքային խորհրդի
կամ նրա նախագահության անդամները՝ պարտական են
ներանց ազատել աշխատանքից՝ անհրաժեշտ ժամանա-
կով:

46. Սույն գլխում նախատեսված կանոնները տա-
րածվում են նաև քաղաքային խորհրդի անդամների
անձնակազմի անդամների վրա:

ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Աշխատանքի ճակատում հերոսութան խելական
նմուշներ են ցուցաբերում արգին զոչ էն մոտավոր-
ները, այլ տասնյակ ու հարուր հազարավոր մարդիկ»
(Կազմակից, 17-րդ համագ.)

ՀԱԶԱՐԱՎՈՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԱՇԽԱ-
ՏԱՎՈՐՆԵՐ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՆ ՔԱՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ
ՄԵՋ

ՀՄԽՀ քաղաքային խորհուրդների մեջ ներգրավված
են հազարավոր լավագույն, հարվածային բանվորներ,
բանվորուհիներ, աշխատավորներ, նրանցից շատերը
ակտիվ կերպով, անձնվերությամբ և խանդավառու-
թյամբ մասնակցում են սոցիալիստական շինարարու-
թյան այս կամ այն բնադավառում: Տասնյակ և հարյու-
րավոր որինակներ կան, վորոնք նշում են թե ինչպես
Յերեանի, Լենինականի քաղաքային խորհրդի ան-
դամները՝ գիտակցելով իրենց անելիքները, տարիներ
չարունակ լծված քաղաքի շինարարության, բարեկարգ-
ման, սոցիալ-կուլտուրական, աշխատանքներին, պար-
տաճանաչությամբ կենսագործում են կուսակցության ու
կառավարության գիրեկախիվները: Ելեկտրոքարչի,
Ջրմուղի, կոյուղու, բաղնիքների, հյուրանոցների և այլ
խոշոր կոմունալ ձեռնարկությունների ու բնակարանա-
յին շինարարության մեջ Քաղխորհրդի անդամները ցու-
ցաբերել են աշխատանքի որինակելի նմուշներ: Սակայն
Քաղխորհրդի այդ լավագույն աշխատող անդամների
կողքին մենք ունենք և այնպիսիները, վորոնք մինչև
այժմ ել չեն գիտակցում իրենց անելիքները, չեն տիրա-

պետում աշխատանքի նորագույն մեթոդներին և սրահետեանքով հետ են մնում սոցիալիստական շինարարության բուռն ընթացքից: Այդպիսի անդամներին ողնելու, ոժանդակելու, նրանց անելիքների մասին պարզ պատկերացում տալու համար, վորպեսզի նրանք կարողանան հասնել Քաղխորհրդի առաջավոր անդամներին, անհրաժեշտ և կանգ առնել Քաղխորհրդի անդամների իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև աշխատանքի նորագույն մեթոդներին տիրապետելու խնդիրների պարզաբանման վրա:

2. ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՔ Ե ԸՆՏՐԵԼ ԼԱՎԱ-ԳՈՒՅՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԻՆ, ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒՆ, ԱՇԽԱՏԱՎՈՐԻՆ

Քաղխորհրդի անդամ պետք և ընտրել այնպիսի ընկերներ, վորոնք հեղինակություն են վայելում բանվորության կողմից, ընդունակ են ակտիվորեն, անձնվորությամբ լծվել սոցիալիստական շինարարության աշխատանքներին, դասակարգային թշնամիների դեմ և հետևողական կերպով կենսազործել կուսակցության ու կառավարության վորոշումները Քաղխորհուրդների աշխատանքների, քաղաքային շինարարության վերաբերյալ: Վորպեսզի խորթ և անհարազատ տարբեր ներս չսողակվեն խորհուրդների մեջ, անհրաժեշտ և լավագույն կերպով նախապատրաստվել ընտրություններին, ինչպես նաև հատուկ ուշադրություն նվիրել թեկնածուների առաջադրման խնդրին:

ՀՄԽ Հ սահմանադրության 84 հոդ. համաձայն խորհուրդների պատգամավոր ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն առանց սեռի, դավանանքի, ցեղի, ազգության, նստակեցության և այլ խտրության ՀՄԽ Հանրապետության մինչև ընտրության օրը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները:—

ա. Ուլեր արտադրողական և հանրոգուտ աշխատանքով են ապրուստի միջոցներ ձեռք բերում, այլ և այն անձինք, վորոնք տնային տնտեսությամբ զբաղվելով՝ արտադրողական աշխատանքի հնարավորություն են ընձեռնում առաջիններին.

բ. Բանվորադուլացիական Կարմիր բանակի և նա-
վատորմի կարմիր զինվորները և նավաստիները:

գ. «ա» և «բ» կետերում հիշված կատեգորիաների
քաղաքացիները, վորոնք վորևե չափով կորցրել են իրենց
աշխատունակութունը:

Ընտրելու և ընտրվելու իրավունք են վայելում նաև
բոլոր խորհրդային հանրապետութունների քաղաքացի-
ները և այն ոտարյերկրացիները, վորոնք ապրում են
ՀՍՍՀ սահմաններում և պատկանում են բանվոր դասա-
կարգին և աշխատավորական գաղմունք ունեն, նաև ու-
րիշի աշխատանքից չոգտվող դուլացիները, խորհրդա-
յին սոցիալիստական հանրապետութունների միության
գերագույն մարմինների վորոշումների հիման վրա:

Ընտրութունների ժամանակ յուրաքանչյուր քաղա-
քացի ակտիվորեն մասնակցելով ընտրութուններին
պետք է ապահովի սահմանադրության այս սկզբունքնե-
րի կենսագործումը և թույլ չտա, քաղխորհրդի մեջ ներս
խծկվելու դասակարգային թշնամու գործակալներին:

3. ԻՆՉ ԿԱՐԳՈՎ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղխորհուրդի անդամներն ընտրվում են ընտրա-
կան ժողովներում: Այդ ժողովները հրավիրվում են ընտ-
րական հանձնաժողովների կողմից:

Քաղաքներում ընտրական ժողովները կազմակերպ-
վում են ըստ արտադրական միավորների, (ձեռնարկու-
թյուն, հիմնարկ) արհեստակցական միությունների կամ
տերրիտորյալ միավորների (չրջանների, թաղերի և
այլն): Ընտրությունները կատարվում են նախորդ
մշակված ծրագրով, վորի մեջ նշվում է, արհմիություն-
ների, կոլեկտիվների անունը, ժողովի տեղը, ընտրու-
թյան ուրը, ժամը, ժողովի նախագահի անունը, ազգա-
նունը, հաշվեառների անունը, ազգանունը և ընտրող
պատգամավորների քանակը: Ահա մի որինակ Յերեսանի
Քաղխորհուրդի ընտրությունների ծրագրից.

**ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ 1931 թ. ԸՆՏՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԸՍՏ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԱՐՏԱՂԻԱԿԱՆ ՅԵՎ ՏԵՐՐԻՏՈՐԻԱԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ**

ԸՆԹ.	ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՌՈՒՆԸ	Ժողովի անդի	Ամսա- ստիվ	Վարժապե- տ և կադետներ թիվը	Փողովի հա- վաք. անդի թիվը	Հարկատու անդի թիվը	Քանի որ գում. արհ. թիվը
1	Սեխանիկյան դործա- բանի կոնկրետի.	Միացյալ աղուսք	12/1 1931թ.	Երեմի- ժամբ Թ-ին	Ա. Բալա- յան	Լ. Նի- կոպոս- յան	6
2	Տղադրիկների միություն, Պետքատի 2-րդ աղարտ- սի և Հաղպատի աղարտանի կալեկանիկներ.	Պոլիգրա- ֆի կար- միք անկյուն	10/1 1931թ.	Երեմի- ժամբ 7-ին	Հ. Հաղպա- յան	Զ. Զա- ղար- յան	3
3	1-ին, 2-րդ, 3-րդ քաղ- մասերի թուրք ընտ- րողներ	Կրկես	10/1 1931թ.	Երեմի- ժամբ 12-ին	Քյա- ղուսով	Կ. Հա- կոբ- յան	3

Ընտրությունների այս կարգը լայն չափով մասնա-
յականացվում է քաղաքի բանվորության, աշխատավո-
րության մեջ: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է
մասնակցել նշանակված ժողովներին և ապահովել լավա-
դույն ընկերների ընտրությունը քաղխորհուրդի կազմի
մեջ:

**4. ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՍՈՑԻԱ-
ԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՄԱՐՏԻԿԸ**

Ընտրելու որից Քաղխորհուրդի անդամը պետք է
աշխատողներն մասնակցի Քաղխորհուրդի աշխատանքնե-
րին: Նա պարտավոր է ձեռնարկությունում, հիմնա-
րկում, սեկցիաներում, պատիվ բազմերում և ամենուրեք,
վորտեղ լինում է, իր որինակելի աշխատանքով ապա-
ցուցել, վոր ինքը քաղաքի սոցիալիստական շինարարու-
թյան առաջավոր մարտիկն է: Քաղխորհուրդի անդամը,
վորը հեռու յե մնում դործնական աշխատանքներից, չի
կատարում Քաղխորհուրդի հանձնարարությունները,
ընտրողների նախազը—նսեմացնում է թե իր և թե քաղ-
խորհուրդի հեղինակությունը:

5. ՔԱՂԵՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԵԿՑԻԱՆԵՐՈՒՄ

Քաղխորհրդի անդամը պարտավոր է աշխատել մի վորևե սեկցիայում.

Քաղխորհրդի անդամը պարտավոր է աշխատել սեկցիաներից վորևե մեկում: Սեկցիայի ընտրությունը կախված է նրա ցանկությունից, սակայն այդ ընտրությունը չպետք է կամայական լինի: Յուրաքնչյուր անդամ ներդրավելով այս կամ այն սեկցիայի մեջ, պետք է հաշվի առնի իր ընդունակությունները, իր գիտելիքները և այն թե ինչ չափով նա կարող է ողտակար լինել տվյալ բնագավառում: Յեթե մեկը ուսուցիչ է նպատակահարմար և, վոր նա մասնակցի լուսավորության սեկցիայի աշխատանքներին, յեթե մյուսը բժիշկ է՝ առողջապահական սեկցիային:

Ինչպես պետք է աշխատի քաղխորհրդի անդամը սեկցիայում

Քաղխորհրդի անդամ սեկցիոները պարտավոր և կանոնավոր հաճախել սեկցիայի նիստերին, սեկցիայի կողմից հրավիրվելիք խորհրդակցություններին, ճշտությամբ կատարել սեկցիայի հանձնարարությունները, ինչպես նաև հսկել սեկցիաների վորոշումների կատարման վրա և գործնականապես ոժանդակել այդ վորոշումների իրականացմանը:

Քաղխորհրդի անդամն ուշանալով նիստերից, ժողովներից, չկատարելով սեկցիայի հանձնարարությունները, կարգադրությունները, վորոշումները թուլացնում է սեկցիայի աշխատանքները, խախտում կարգապահությունը և այդպիսով առաջացնում արդարացի դժգոհություններ մյուս անդամների մեջ: Յեղակի չեն այն դեպքերը, յերբ անդամների բացակայության հետևանքով սեկցիայի նիստերը հետաձգվել են: Հարյուրավոր որինակներ կան, յերբ սեկցիայի վորոշումները լուկ մնացել են թղթի վրա, չնորհիվ անդամների անպարտաճանաչ վերարբերումների: Քաղխորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է լավ գիտակցի, վոր սեկցիաները

խորհուրդների հիմնական մասսայական որդաններն են, վորոնք աշխատավորական լայն մասսաներին ներգրավում են պետութունը կառավարելու՝ քաղաքային խորհուրդի գործնական աշխատանքներին մասնակցելու միջոցով: Այն անդամ-սեկցիոները, վոր գործնականապես չի մասնակցում Քաղխորհրդի աշխատանքներին, չի կարող մնալ Քաղխորհուրդի կազմի մեջ:

Քաղխորհրդի անդամ-սեկցիոներն իր լավագույն աշխատանքով պետք է որինակ հանդիսանա սեկցիաների ներգրավվածներին, վորոնց ընտրում են արհեստակցական, հասարակական, ԼԿՅԵՄ և այլ կազմակերպությունները: Յեթե Քաղխորհուրդի անդամը վատ է աշխատում, թերանում է իր պարտականությունների մեջ, ուշանում է նիստերից, նա չի կարող պայքարել աշխատանքի լավագույն ցուցանիշների համար և մյուսներին որինակ դառնալ:

6. ՔԱՂԱՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԱԿՏԻՎՈՐԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՊԱՏՆՄԲԱԿԻ ԱՇԽԱ- ՏԱՆՔՆԵՐԻՆ

Ինչպես նշված է քաղաքային խորհուրդների կանոնադրության 36 հոդվածում «պատգամավորական խմբակները քաղաքային խորհուրդի քլիջներն են հանդիսանում ձեռնարկություններում, վորոնց միջոցով քաղաքային խորհուրդը կազմակերպում է պայքար՝ արտադրական խնդիրների լավագույն կատարման համար և ներգրավում է քաղաքային խորհուրդի աշխատանքներին մասնակցելու տվյալ ձեռնարկության աշխատակիցների կողմից»: Խորհրդային պատգամավորական խմբակները կազմակերպված են Յերևանի, Լենինականի, Ղարաբաղի խորհրդի քաղաքների գրեթե այն բոլոր խոշոր ձեռնարկություններում, վորտեղ կան քաղխորհրդի կամ վերադաս խորհուրդների վոչ պակաս քան 3 անդամ և անձնավորխանորդ: Այդ խմբակների հաջող ընթացքը առաջին հերթին կախված է քաղխորհուրդի անդամների ակտիվ մասնակցությունից, վորոնք համախմբելով իրենց շուրջը ձեռնարկության

ազատիվը պետք է ոժանդակեն արդֆինսլլանների կատարմանը, արտադրողականության, արտադրանքի վերակիրաւորեցման, ինքնարժեքի իջեցման, բանմատակարարման, ձեռնարկության սանիտարական պայմանների բարելաւման աշխատանքներին և այլն:

Յերեւանի փայտամշակման, Լենինականի տոմեռի, Հացի, տրիկոտաժի, Տեքստիլ, փայտամշակման և մյուս գործարանների խորհրդային պատգամավորական խմբակները. վերջին ժամանակներում ցուցադրեցին աշխատանքի լավագույն կազմակերպւածություն, վոր հետեւանք է քաղաքային խորհուրդներին անդամների հետեւողական ու սիստեմատիկ աշխատանքի: Քաղխորհուրդի բոլոր անդամները պետք է հետեւեն առաջավոր խորհրդային պատիւմբակների մեջ ընդգրկւած քաղխորհուրդին անդամներին և ընդորինակեն նրանց աշխատանքի փորձը:

7. ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՄՐԱՑՎԱԾ ԱՆԴԱՄԻ ՄԱՍԻՆ

Վորոշակի աշխատանք տանելու համար Քաղխորհուրդին անդամն ամբացւում է այս կամ այն ձեռնարկության, հիմնարկության, կազմակերպության: Յերեւանի ելեկտրոքարչի շինարարության ժամանակ քաղխորհուրդի անդամներն ամբացւել եյին շինարարության տարբեր բնագավառների և կառուցման աշխատանքների ընթացքում զգալի, ոժանդակություն ցույց տվին: Նրանք վոչ միայն հայտնաբերեցին ու ժամանակին ահազանդ տվին թերությունների մասին, այլ իրենց գործնական ոժանդակությամբ նպաստեցին այդ բացերի վերացման:

Դպրոցներին ամբացւած քաղխորհուրդի անդամները հսկում են դպրոցական պարապմունքների ընթացքի, դպրոցական գույքի պահպանության, վերանորոգման և կանոնավոր ոգտագործման, աշակերտության հաճախումների, կարգապահության վրա և այլն. այսպես քաղխորհուրդին ամբացւած անդամները պարտաւոր են մասնակցել տվյալ ձեռնարկությունների, հիմնարկնե-

րի, կազմակերպությունների բանավորների, ծառայող-
ների, ընտրողների և այլ բնույթ կրող ժողովներին,
արտադրական խորհրդակցություններին, կոնֆերանս-
ներին. հսկել հիշյալ հիմնարկ ձեռնարկների, կազմա-
կերպությունների աշխատանքներին, ինչպես նաև հե-
տևել, վորպեսզի կյանքում կիրառվեն քաղաքային խոր-
հրդի և իշխանության վերադաս մարմինների վորոշում-
ները, պարզաբանելով քաղաքային խորհրդի այս կամ
այն ձեռնարկումների և վորոշումների իմաստը:

8. ԲԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՊՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Խորհրդային սահմանադրությունը քաղխորհուրդի
անդամներին դնում է աշխատավոր մասսաների ամբող-
ջական վերահսկողության ներքո: Պատգամավորների
կապն ընտրողներին հետ իրականացնելու համար դոյու-
թյուն ունի իրավական յեղեք ինտիտուտ. նաևազ պատ-
գամավորին, պատգամավորի հաշվետվությունն ընտ-
րողների առաջ և պատգամավորին վաղաժամ հետ կան-
չելու իրավունքը:

ՆԱԿԱԶԸ պարունակում է իր մեջ խորհրդի աշխա-
տանքի ծրագիրը, պատգամավորի ընտրության ժամա-
նակաշրջանի ընթացքում: Նաևազն իրենից ներկայաց-
նում է մի հրահանգ, վորը պարտավորացնում է պատ-
գամավորին խորհրդի միջոցով իրականացնել այն բոլոր
ձեռնարկումները, վոր կոչված են սպասարկելու ընտ-
րողների՝ վորպես աշխատավորության մի մասնիկի պա-
հանջները, կարիքները: Նաևազը հզորագույն միջոց է
պատգամավորների և ընտրողների միջև ամուր կապ
ստեղծելու և լայն մասսաները յերկրի տնտեսական և
քաղաքական կյանքը կառավարելու գործի մեջ ներգրա-
վելու համար:

Պատգամավորների նաևազը, քաղաքային խոր-
հուրդներն ընտրությունից հետո, պետք է սխտեմա-
տիզացիայի յենթարկեն ու տպադրված ձևով հանձնեն
քաղխորհուրդի բոլոր անդամներին: ՀՄԽՀ պայմաննե-
րում առաջին փորձն այս ուղղությամբ կատարեց Յերևո

նի քաղաքային խորհուրդը, վորը դրական հետևանքներ
ապօքս:

Քաղխորհրդի անդամը պարտավոր է հաշվետու
լինել ընտրողների առաջ— Սահմանադրութեան 80-րդ.
հոդվածում ասված է՝ «պատգամավորական խորհուրդ-
ների անդամները պարտավոր են պարբերաբար հաշիվ
տալ իրենց ընտրողներին, իսկ քաղխորհուրդի կանոնա-
դրութեան 40-րդ հոդ. «դ» կետում նշվում է, վոր քաղ-
խորհուրդի անդամը «հաշվեգեկույց է տալիս ընտրողնե-
րին վոչ պակաս, քան տարին յերկու անգամ, լուսաբա-
նելով հաշվեգեկույցներում ինչպես քաղաքային խոր-
հուրդի ու նրա որդաններին, նույնպես և իր, վորպես
խորհրդի անդամի, գործունեյութեան մասին»: Հաշվե-
տվությունը լավագույն միջոցն է ամրապնդելու կապը
ընտրողների և պատգամավորների միջև: Դժբախտաբար
քաղաքային խորհրդի անդամները կանոնադրութեան
վերոհիշյալ պահանջը հաճախ չեն կատարում:

Քաղխորհուրդի անդամների հաշվետվությունը
պետք է անցկացնել կազմակերպված, նախորդ մշակ-
ված ծրագրով դրա համար սահմանելով հատուկ միամ-
սյակ, տասնորյակ: Քաղխորհուրդի անդամների հաշ-
վետվությունը չսելու համար ժողովները հրավիրում են
քաղխորհուրդների, նրանց նախագահությունների նա-
խաձեռնութեամբ, ինչպես նաև ընտրողների պահանջ-
մամբ: Ընտրողների ժողովները կայացած են համարվում,
յեթե ներկա չեն ընտրողների առնվազն 35 տոկոսը: Եթե
ժողովը հետաձգվում է վերոհիշյալ թվով ընտրողներ
չներկայանալու պատճառով, 2-րդ ժողովը կայացած է
համարվում անկախ ներկա յեղող ընտրողների թվից:
Ընտրողների ժողովը բաց է անում քաղխորհուրդի ներ-
կայացուցիչը, վորին նշանակում է քաղխորհուրդի նա-
խագահությունը, ապա ժողովն ընտրում է նախագահու-
թյունը, վորը և ղեկավարում է նիստը: Եթե ընտրող-
ների ժողովում տվյալ ձեռնարկությունից, հիմնարկու-
թյունից, կազմակերպությունից մասնակցում են մի քա-
նի քաղխորհուրդի անդամներ, քաղխորհուրդի աշխա-
տանքների մասին ղեկուցում տալիս է նրանցից վորևէ

մեկը: Այդ գեկուցումը հանձնարարվում է այնպիսի ընկերոջ, վորը կարող է սլարզ, հասկանալի և սեղմ կերպով պատկերացնել ընտրողների առաջ քաղխորհուրդի աշխատանքները, այդ աշխատանքների ընթացքում ձեռք բերված նվաճումներն ինչպես նաև դրսեվորել գոյություն ունեցող բացերը և բոլորի ուշադրությունը հրավիրել հայտնաբերված թերությունները վերացնելու գործի կաղմակերպման վրա. քաղխորհուրդի մյուս անդամները նույն ժողովում հաշվետու յեն լինում միայն իրենց գործունեյության մասին: Հաշվետու գեկուցումը քննության է յենթարկվում ընտրողների կողմից և այդ առթիվ հանվում է վորոշում, վորտեղ արվում է քաղաքային խորհուրդի գործունեյության և խորհրդի առանձին անդամների աշխատանքների գնահատականը: Ընտրողների ժողովի վորոշման մեջ պետք է մատնանշվեն.

ա) խորհրդի աշխատանքի թերությունները.

բ) խորհրդի անդամների աշխատանքի թերությունները և

գ) պատգամավորին հետ կանչելու վորոշումները:

Բացի ընտրողների ժողովներում հաշիվ տալուց, քաղաքային խորհրդի անդամները պետք է ոգտվեն իրենց ընտրողների յուրաքանչյուր ժողովից (հիմնարկներում, ձեռնարկություններում, ընտրողների չկաղմակերպված խմբերի քաղմասային ժողովներում և այլն) քաղաքային խորհուրդի աշխատանքների մասին նրանց ինֆորմացիոն գեկուցում տալու, քաղաքային խորհուրդի, նրա սեկցիաների առաջ դրված կարևորագույն հարցերը քննության առնելու, ինչպես նաև քաղաքային խորհուրդի աշխատանքների թերությունների և նրանց վերացման մասին ընտրողներից ցուցումներ տալու համար: Հաշվետությունից հետո, վոչ ուշ յերեք որվա ընթացքում, քաղխորհուրդի անդամը գեկուցում է քաղխորհուրդի նախագահության իրենց ընտրողների առաջ հաշիվ տալու մասին:

Պատգամավորին վաղաժամ հետ կանչելու իրա-
վունքը հանդիսանում է խորհրդային դեմոկրատիայի
հիմնական սկզբունքներից մեկը: Քաղաքային խոր-
հուրդների 1934 թ. հունվարի 4-ի կանոնադրության 41,
42 հոդվածներում ասված է. «քաղաքային խորհուրդի
պատգամավորին ընտրողներն իրավունք ունեն ամեն
ժամանակ հետ կանչել նրան: Քաղաքային խորհուրդ-
ները պարտական են ընտրողների առաջ հարց բարձրաց-
նել հետ կանչելու առանձին պատգամավորներին, յերբ
նրանք իրենց գործունեյության ընթացքում ազավա-
ղում են պրոլետարական դասակարգային քաղաքակա-
նությունը, խախտում են հեղափոխական որինականու-
թյունը, սխառեմատիկորեն չեն կատարում պատգամա-
վորական պարտականությունները, միջոցներ չեն ձեռ-
նարկում իրականացնելու ընտրողների հրահանգները
և թույլ են տալիս պատգամավորին անվայել արարք»:

Վ. Ի. Լենինը նշում է. (խորհուրդները ստեղծված
են իրենց աշխատավորների կողմից, նրանց հեղափոխա-
կան կորովի և ստեղծագործության միջոցով և հենց
միայն դրա մեջ է գրավականը, վոր նրանք ամբողջովին
աշխատում են մասսաների շահերի իրականցման համար:
Յուրաքանչյուր գյուղացի ուղարկելով մեկին խոր-
հուրդ, կարող է և հետ կանչել նրան և դրա մեջ է խոր-
հուրդների բուն ժողովրդական իմաստը» (Լենինի ճառը
21-ը նոյեմբերի 1917 թ. համառուսական կենտգործ-
կումում): Պատգամավորների խորհուրդի կողմից հետ
կանչելու հարց կարող են հարուցել տվյալ ընտրական
միավորի ընտրողների մեկ յերրորդը, արհեստակցական,
հասարակական կազմակերպությունները և քաղխոր-
հուրդները: Յեթե ընտրողները կամ հաս. կազմակեր-
պությունները ցանկանում են հետ կանչել քախորհուրդի
անդամին, նրանք հետ կանչելու վերաբերյալ հայտարա-
րությունները, հետ կանչելու պատճառների մատնա-
նշումով, տալիս են համապատասխան քաղխորհուրդին,
բացի այն դեպքերից, յերբ այդ հարցն անմիջաբար հա-




1138/79

բուցվում է քաղխորհուրդի կողմից: Քաղխորհուրդը բնութայան առնելով անդամին հետ կանչելու հարցը վորոշում է կայացնում հրավիրելու համապատասխան ընտրական միավորի ընտրողների ժողով: Այս վորոշման վերաբերյալ քաղխորհուրդը պարտավոր է տեղեկացնել հետ կանչվող անդամին, նրան հրավիրելու և նրա բացատրությունը լսելու ընտրողների ժողովում: Ընտրողների ժողովին իրավազոր է համարվում քաղխորհրդի անդամին հետ կանչելու հարցը վճռելու այն դեպքում, յերբ ժողովին ներկա յեն տվյալ միավորի ընտրողների առնրվադն 40 տոկոսը: Պատգամավորին հետ կանչելու հարցը վճռվում է ընտրողների ընդհանուր ժողովի ներկա յեղողների ձայների պարզ մեծամասնությամբ: Ասենք Մարմարի գործարանի ընտրողները ցանկանում են հետ կանչել իրենց անպարտաճանաչ անդամին: Նրանք հետ կանչման վերաբերյալ դիմումը ներկայացնելով Յերեւանի քաղխորհուրդին ստանում են ընտրողների ժողով հրավիրելու թույլտվություն և ապա հրավիրում այդ ժողովը: Յենթադրենք, վոր Մարմարի գործարանի կուլեկտիվի ընտրողների թիվը կազմում է 500 հոգի: Այս դեպքում ընտրողների ժողովում ներկա պիտի լինեն առնրվադն 200 հոգի կամ 40 տոկոսը: Քաղխորհուրդի անդամին հետ կանչելու հարցը վճռվում է ձայների պարզ մեծամասնությամբ: Ներկա յեղող 200 հոգուց հոգուս հետ կանչման պետք է ձայն տան առնվադն 101 հոգի: Ժողովի վորոշումը վերջնական է և յենթակա չե քաղխորհուրդի հաստատման:

Պատգամավորին հետ կանչելու դեպքում նրան փոխարինում է քաղխորհրդի փոխանդամը փոխանդամների ցուցակի կարգով: Վորեւ պատճառով քաղխորհուրդի փոխանդամ չլինելու դեպքում, նույն այդ ժողովը քաղխորհուրդի թույլտվությամբ կարող է ընտրել քաղխորհուրդի նոր անդամ կամ փոխանդամ:

Ցանկալի յե և անհրաժեշտ, վոր քաղխորհրդի անդամին հետ կանչելու վորոշումը հայտարարվի տեղական մամուլում, պատի թերթում, վորպեսդի լայն հասարակությունն իրազեկ լինի այդ կարևոր վորոշմանը:



10. ԳԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՒՐԱՆՔՆԵՐԸ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ ՀԱՍՑՆԵԼ ՔԱՂ-
ԽՈՐՀՐԴԻՆ ՅԵՎ ԱՅԼ ՈՐԳԱՆՆԵՐԻՆ

Քաղխորհուրդի անդամը, ինչպես նշվեց սկզբում,
պարտավոր է սերտ կապ պահպանել ընտրողների հետ:
Այդ կապի ընթացքում ընտրողները կարող են անել այս
կամ այն առաջադրանքները, հայտարարությունները,
ինչպես նաև ներկայացնել զանազան բնույթ կրող դան-
դատներ: Քաղխորհուրդի անդամը պարտավոր է ընդու-
նել այս բոլորը և առանց ձգձգումների, ընթացք տալ
ու ապա արդյունքների մասին տեղեկացնել ընտրողին:
Յեթե վորևէ մեկ բանվոր կամ աշխատավոր բողոքում է,
վոր իր վորդու ընդունելությունը դպրոց ձգձգվում է
կամ դանդատվում է այս կամ այն քաջքուկի դեմ, քաղ-
խորհուրդի անդամը պարտավոր է այդ բողոքը հասցնել
Լուսբաժինն կամ համապատասխան հիմնարկին և հե-
տևել, վոր հարցը ստանա անհրաժեշտ լուծում: Քաղ-
խորհուրդի յուրաքանչյուր անդամ պետք է լավ գիտակե-
ցի, վոր ընտրողների լավապույն առաջարկները կենսա-
գործելու, թերություններն ու բացերը վերացնելու վե-
րաբերյալ ստացված բողոքներին արագ ընթացք տալու
և լուծելու միջոցով, նա պայքարում է քաջքուկի, բյու-
րոկրատիզմի դեմ, և այդպիսով ավելի յե ամբապնդվում
կապն իր և ընտրողների միջև, ինչպես նաև բարձրանում
է քաղխորհուրդի հեղինակությունը:

11. ՊԱՅԳԱՐԵԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒ-
ԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՐԱՆ ՅԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Քաղաքային խորհուրդի անդամը կոչված է հետևողա-
կան կերպով պայքարել սոցիալիստական որինականու-
թյան սկզբունքների անշեղ կիրառման համար: Քաղա-
քային խորհուրդի անդամը չպետք է մոռանա, վոր ՊԵՏ-
ՄԻՆԶԷ այժմ էլ գոյություն ունի կապիտալիստական
չրջապառը, վորն աշխատում է աշխուժացնել և պահ-

պանել կապիտալիզմի մնացորդները ԽՍՀՄ եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, և, վերի դեմ պետք է միշտ չոր պահենք մեր վառուղը մենք, բոլշևիկները» (ՍՏԱԼԻՆ) :

Քաղաքային խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է լավ գիտակցի, վոր սոցիալիստական որինականությունը հզորագույն զենք է ամրապնդելու պրոլետարիատի գիկտատուրան, պայքարելու դասակարգային թշնամու դեմ, լայն չափով ծափալելու սոցիալիստական շինարարությունը, պայքարելու սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցման համար, ինչպես նաև լավագույն միջոց է դաստիարակելու ու վերադաստիարակելու բանվորների և աշխատավորների առանձին խավերը, պաշտպանելու բանվորների և աշխատավորների շահերը: Քաղաքային խորհրդի անդամը գիտակցելով այս բոլորը պետք է լավագույն կերպով ոգտով այդ զենքից և սոցիալիստական որինականության սուր ծայրն ուղղի հանրային սեփականությունը վատնողներին, գողերին, վնասատուներին և խուլիգաններին դեմ:

Հանրային սեփականությունը սրբազան է և նրա պաշտպանությունը պետք է հանդիսանա քաղաքային խորհրդի անդամի սրբազան պարտականությունը: Յեթե քաղխորհրդի անդամը տեսնում է, վոր քաղաքայնացված շենքերն անողորձաբար փչացվում են, անգիտակից, անբարեխիղճ, վնասարար քաղաքացիների կողմից, նա առանց տատանվելու պարտավոր է այդ քաղաքացու դեմ հարուցել պատասխանատվության հարց, ինչպես նաև յուրաքանչյուր դողին, հափշտակողին, վատնողին, զեղծարարին, վնասարարին, խուլիգանին հանձնի արդարադատության որդանների ձեռքը: Քաղաքային խորհրդի անդամը պետք է պայքարի խորհրդային որենքների անշեղության ու անխախտության համար: «Խորհրդային կարգի նվազագույն խախտումն անգամ, ասում է ԼՅՆԻՆԸ, — արդեն մի բաց է, — վոր անհապաղ ոգտագործում են աշխատավորների թշնամիները»: Մենք գիտենք թե ինչպես սխալմամբ հրատարակված հակաորինական պարտադիր վորոշումները դասակարգային թըշ-

նամենքը ոգտագործել են նսեմացնելու իշխանության հեղինակությունն աշխատավորներին աչքում: Այստեղից արդեն պարզ է թե ինչպիսի հսկայական պատասխանատվություն է ընկնում քաղխորհրդի անդամների վրա ամբապնդելու սոցիալիստական որինականությունը և միջոցներ ձեռք առնելու, վոր խորհրդային որենքը մնա անխախտ:

Սոցիալիստական որինականության կերպուման հիմնական լծակներն այդ դատարանն ու դատախազությունն է: Քաղաքային խորհրդի անդամները պետք է ամեն կերպ աջակցեն, ոժանդակեն դատարաններին, դատախազության: Այդ նպատակով անհրաժեշտ է, վոր քաղաքային խորհրդի անդամները ներգրավվեն քաղխորհրդի հեղափոխական որինականության սեկցիաների մեջ և իրենց ակտիվ աշխատանքով աշխուժացնեն այդպիսին, մտնեն դատախազության ոժանդակող խմբակներին մեջ, հանդես դան դատարաններում, վորպես ատենակալներ, լայն ագիտացիոն բացատրական աշխատանք տանեն ամբապնդելու սոցիալիստական որինակա-նությունը և յուրաքանչյուրի մեջ արմատացնելու այն դեմակցությունը, վոր «ամեն մի բանվոր և կուտնտեսական շոշափելի կերպով դժա, վոր նա դառնալով է խորհրդային որենքների պաշտպանության տակ, վոր խորհրդային պետությունն իր ամբողջ զորությամբ պահպանում է նրա աշխատանքը, նրա կենցաղի իրավա-կան պայմանները, վոր նրա իրավունքները խախտելու վոչ մի փորձ՝ կապիտալիստական դատակարգների մնացորդների և խորհրդային ապարատի մեջ բուն դրած բյուրոկրատ, ալլասեռված տարրերի կողմից, անպա-տիժ չի մնա»:

12. ՔԱՂԵՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԼԾՎԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԵՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

«Գլխավորը կազմակերպչական աշխատանքների մեջ, դա մարդկանց ընտրությունն է և վորոշումներին կա-տարման ստուգումը» (Ստալին): Մեծ առաջնորդի այս

խոսքերը քաղաքային խորհուրդի յուրաքանչյուր անգամ պարտավոր եւ լավ հիշել եւ կենսագործել: Կուսակցութեան եւ իշխանութեան մարմինները կարեւորագույն վորտչումներ ունեն նվիրված քաղաքների շինարարութեան, կոմունալ տնտեսութեան հարցերին: Հունիսյան պլենումի պատմական վորտչումների մեջ յամված ե. «Հնգամյայեի համար, սոցիալիստական շինարարութեան հետագա հաջողութեանների համար, սոցիալիստական ձեռնարկութեանների իրացման, աշխատավորութեան նշանակական կենցաղային պայմանների բարելավման, նրանց կուլտուրական վերելքի ու առողջութեան պահպանման եւ ռեյալ աշխատավարձի անշեղ աճման համար միջոց պայքարում քաղաքային տնտեսութեան հարցերը (քնկարանային շինարարութեան, ջրամատակարարում, յուսավորութեան, ջեռուցում, կոյուղի, քաղաքային տրանսպորտ, ներքին բարեկարգում, բաղանիքներ, բնակարաններ, հասարակական սնունդ եւ այլն) խոշորագույն նշանակութեան են ստանում»: Այս բոլոր խնդիրների կենսագործումը, վոր կոչված եւ ապահովելու սոցիալիստական շինարարութեան բոլոր աճումը, ազգայնապետութեան կուլտուր կենցաղային պայմանների բարելավումը պահանջում եւ հետեւողական ու համառ աշխատանք: Քաղխորհրդի անգամն անձնվեր աշխատանքով պետք եւ ապացուցի, վոր նա իրոք քաղաքի սոցիալիստական շինարարութեան առաջավոր մարտիկն ե:

13. ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԻՐՆԷՔԱՂԱՔԻ ԲՈՒՍԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Քաղաքների բուսապատման խնդիրն ամենահրատապ հարցերից մեկն ե: Յերեանի քաղխորհուրդի պիտումում ընկ. Ա. Խանձյանն իր յեւելքի մեջ ընդգծեց, վոր «Յերեան քաղաքի կանաչադարձման-ծառատնկման գործն ինքնահոսի յե մատնված քաղխորհուրդի կողմից: Կանաչի տարածութեանը քաղաքում եւ շրջապատում առայժմ վոր միայն չի լայնանում, այլ նույնիսկ կրճատվում ե: Այստեղ գործում եւ կանասարար ձեռքը, եւ մեր քաղխորհուրդի անճարակութեանն ու թափթիվածու-

թյունը»։ Նշելով այս բոլորն ընկ. ԽանՂյանը պահանջ է դնում քաղխորհրդի նախագահությանը 10 որում մշակել ծառատնկման դործնական և լայն ծրագիր, այն հաշվով, վոր այս աշնանից մանավանդ դարնանից սկսվի անմիջական աշխատանք։ Կենտրոնի քարտուղարի այդ պահանջը պետք է իր լայն արձագանքը գտնի քաղխորհուրդների անդամների կողմից։ Անհրաժեշտ է մոտակա տարիներում մեր քաղաքներում ստեղծել կուլտուրական այգիներ, պարտեզներ, պուրակներ, դրոսավայրեր և այլն։ Քաղխորհուրդի յուրաքանչյուր անդամ պետք է գիտակցի, վոր կանաչ բուսականությունը քաղաքի «թոքերն են»։ Կանաչ բուսականությունը մաքրում է ողը փոշուց, կլանում է ածխածինը, հարստացնում է ողը թթվածինով։ Կանաչ բուսականությունը հեշտացնում է պայքարը հրդեհների դեմ, արգելք հանդիսանալով նրա ծավալմանը, նա գեղեցկացնում է քաղաքները, իսկ հարավում նրա խիտ ստվերի տակ պաշտպանություն է գլտնում ջրային բաց արտերյայները։ Գիտակցելով այս բոլորը, քաղխորհրդի անդամները պետք է հետևողական կերպով կենսագործեն քաղաքների կանաչադարձման մասին կուսակցության և կառավարության, քաղխորհուրդների վորոշումները և մոտիկ տարիներում Յերևանը, Լենինականը, Ղարաքիլիսան, Ն. Բայազետը, Ստեփանավանն ու Դիլիջանն այդ տեսակետից դարձնեն ուրիշական վայրեր։

Քաղխորհուրդի անդամի անելիքները կանաչադարձման ասպարիզում հետևյալներն են. աշակցել փողոցների, բակերի, շենքերի, ձեռնարկությունների ծառատնկման, կանաչադարձմանը, ծառատնկել իր տան բակը. հսկել, վոր քաղաքացիները, յերեխաները չփչացնեն ծառերը, կանաչ բուսականությունը, պատասխանատվության հարց հարուցել այն բոլորի նկատմամբ, վորոնք խախտում են քաղխորհուրդի պարտադիր վորոշումները՝ կանաչ բուսականությունը պահպանելու մասին, լայն ագիտացիա մղել ազդարնակչության մեջ կանաչ բուսականության պահպանության վերաբերյալ. վերցնել վորոշ ծառերի պահպանության շեֆությունը և այլն։

Մեր քաղաքներն առանձնապես Յերեանը, Լենինա-
կանը, Ղարաքիլիսան դեռ չառ են հետ մնում խորհրդա-
յին հոլլաուրական քաղաքներից: Ընկ. ՍանՂյանը Յե-
րեանի քաղաքային պլենումում ասաց. «Յերեկվա թեր-
թերում մենք կարգացինք մեր կուսակցության յերկրա-
յին կոմիտեյի քարտուղար, Անդրկովկասի բոլշևիկների
ղեկավար ընկ. Բերիայի ճառը, նվիրված Թիֆլիսի կո-
մունալ շինարարության դրությանը և խնդիրներին: Իր
յեղութիւնում ընկ. Լավրենտին խոսում ե Թիֆլիսի մա-
սին, բայց նրա յեղութի նշանակությունը չի սպառվում:
միայն Թիֆլիսի սահմաններով. Ընկ. Բերիան բոլորիս
փայլուն օրինակ ե տալիս թե ինչպես պետք ե մոտենանք
քաղաքային շինարարության խնդիրներին, ինչպիսի
կոնկրետությամբ դնենք ու վճռենք քաղաքային տնտե-
սության խնդիրները: Յերեանի Քաղխորհուրդը և քա-
ղաքի կուսակցական կադմակերպությունները պարտա-
վոր են անմիջապես անհրաժեշտ հետևություններ անել
ընկ. Բերիայի ցուցմունքներից: Ճիշտ ե մեր քաղաքն
ուսնի իր բացառիկ առանձնահատկություններն՝ հենց
նույն Թիֆլիսի հետ համեմատած: Մենք նոր ենք ստեղ-
ծում, դատարկ տեղում, քաղաքային տնտեսության բո-
լոր ճյուղերն անխտիր: Յերեանը բացարձակապես
դուրի եր, — դուք այդ գիտեք, — քաղաքային տնտեսու-
թյան պահանջներին բավարարող ամենահասարակ պա-
մաններից: Այս հանգամանքը հավելյալ դժվարություն-
ներ ե հարուցում քաղաքային շինարարության բնագա-
վառում, սակայն ինչ ել, վոր լինի մեր առաջ ել ավելի
սրությամբ են ծառացել նույն խնդիրները՝ ինչ վոր խոր-
հրդային մյուս քաղաքները»: Այդ խնդիրներից կարևո-
րագույնը մեր քաղաքներէ մաքրության և սանիտարա-
կան հիգիենիկ պայմանների ստեղծման հարցն ե: Քաղա-
քի փողոցները, հրապարակները, դրոսավայրերը, պար-
տեղները, պուրակները, շենքերը, բակերը, հասարակա-
կան վայրերը մաքուր պահելու համար անհրաժեշտ ե
կադմակերպել իրական, բոլշևիկյան պայքար: Այդ պա-
յ-

բարի մեջ իրենց առանձնահատուկ տեղը պետք է գրառեն քաղխորհուրդի անդամները: Նրանց անմիջական պարտականությունների մեջ է մտնում. հսկել փողոցների, բակերի, շենքերի, հասարակական վայրերի մաքրության վրա և գոյություն ունեցող բացերի վերացնելու ուղղությամբ ձեռք առնել համապատասխան միջոցներ. բացատրական լայն աշխատանք տանել ազդարնակչության մեջ և ներդրավել նրանց քաղաքի մաքրության գործին. սեփական բնակարանները, նրանց շրջապատը մաքուր պահելու միջոցով որինակ հանդիսանալ մյուս քաղաքացիներին, գործնականապես մասնակցել կոյուղու, բազնիքների, զվացքատների, ստադիոնների կառուցման աշխատանքներին, վորոնք կոչված են բարելավելու քաղաքների սանիտարական-հիգիենիկ պայմանները և այլն:

15. ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ՊԵՏՔ Ե ԼՐԻՎ ԶԱՓՈՎ,
ԻՄԱՆԱ ՅԵՎ ՈՐՏԱԳՈՐԾԻ ԻՐԵՆ ՎԵՐԱՊԱՀԱԾ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Քաղխորհրդի անդամ է համարվում, ով ընտրված է քաղխորհուրդի կազմի մեջ խորհուրդների ընտրությունների վերաբերյալ որենքների հիման վրա: Հետևաբար քաղխորհուրդի անդամին չի կարելի նշանակել կամ կոդպտացիայի յենթարկել: Քաղաքային խորհուրդի ընտրված պատգամավորը վերջնականապես քաղխորհուրդի անդամ է համարվում այն մոմենտից, յերբ ՀՍԽՀ քաղաքային խորհուրդների կանոնադրության 47-րդ հոդվածի հիման վրա ընտրությունները հաստատվում են պլենումների կողմից: Քաղաքային խորհուրդի անդամի լիազորությունների ժամկետը համարվում է մեկ ընտրությունից մինչև մյուս ընտրությունը, թեև քաղխորհուրդի անդամը կարող է ժամկետից շուտ դուրս գալ քաղխորհրդի կազմից՝ իր ցանկությամբ, ընտրական իրավունքից զրկվելու հետևանքով, ընտրողների վորոշման հիման վրա (հեռ կանչում): Քաղխորհուրդի անդամի իրավունքներն են. մասնակցել քաղխորհուրդի, սեկցիաների նիստերին, ախտեղ քննության առնելիք և վորոշելիք հարցերին. իր նախաձեռ-

նությամբ քաղխորհուրդի քննության հանձնել զանա-
զան հարցեր. այս կամ այն խնդիրների վերաբերյալ ար-
տահայտել իր սեփական կարծիքը: Քաղաքային խոր-
հուրդի անդամն իրավագորք ե իր մանդատը ներկայաց-
նելով ազատ մուտք ունենալ քաղխորհուրդի սահման-
ներում գտնված հիմնարկություններն ու ձեռնարկու-
թյունները և նրանց պաշտոնյաների մոտ, այլև իրա-
ւոյնք ունեն պահանջել տեղեկություններ և բացատրու-
թյուններ՝ բացառությամբ զազտնի բնույթ ունեցող տե-
ղեկությունների, վորոնց ստանալու համար պահանջ-
վում ե քաղաքային խորհուրդի նախադահության թույ-
տությունը: Հիմնարկություններում, ձեռնարկու-
թյուններում, կադմակերպություններում նկատված
բացերի մասին քաղխորհուրդի անդամներն իրազեկ են
դարձնում այդ հաստատությունների ղեկավարներին,
քաղխորհուրդներին, առանց միջամտելու նրանց բնթա-
ցիկ գործունեյությանը: Յենթադրենք քաղխորհուրդի
անդամ ընկ. Սարգսյանը լինելով կոնսերվի գործարա-
նում նկատում ե մի շարք բացեր աշխատանքի կադմա-
կերպման բնագավառում: Նա այդ թերությունների
մասին պարտավոր ե իրազեկ դարձնել կոնսերվի ղեկեկ-
տորին, յեռանկյունուն, քաղխորհրդին և պահանջ դնել ու
աջակցել, վոր այդ թերությունները կարճ ժամանակա-
միջոցում վերացվեն, սակայն քաղխորհրդի անդամն իրա-
վագորք չե անմիջաբար կարգադրելու գործարանին, նրա
առանձին ցեխերին, աշխատակիցներին, վոր վերացնեն
այդ թերությունները: Քաղաքային խորհուրդի անդամ-
ները կարող են քաղխորհրդի անունից հանդես գալ այն
ժամանակ միայն, յերբ այդ մասին քաղխորհուրդից կամ
նրա նախադահությունից ստացվել են համապատասխան
յիադորություն:

Քաղաքային խորհուրդի իրավունքները միաժամա-
նակ հանդիսանում են և նրա պարտականությունները:
Քաղաքային խորհուրդի անդամները պարտավոր են լը-
րիվ չափով ոգտվել իրենց իրավունքներից և այդ առթիվ
հաշվետու լինել քաղխորհուրդների, սեկցիաների, ըն-
տրողների առաջ, վորպեսզի վերջիններն իրազեկ լինեն

թե ինչպես ե նա ուղարկել այդ իրավունքներին, վոր չափով և վորքան ճիշտ:

Քաղխորհուրդի անդամն ունի իմունիտետի կամ անձեռնմխելիության իրավունք: Քաղխորհուրդի կանոնադրության 44-րդ հոդ. ասված ե. «քաղաքային խորհուրդի անդամները չեն կարող ձերբակալվել, առանց դրա մասին տեղեկացնելու քաղաքային խորհուրդի նախագահության կամ նախագահին»:

16. ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Ինչպես նշված ե քաղաքային խորհուրդներին կանոնադրության 45-րդ հոդվածում «քաղաքային խորհուրդի անդամները, վորպես կանոն, իրենց պատգամավորական պարտականությունները կատարում են արտաբանվորական ժամերին: Բացառիկ դեպքերում, յերբ քաղաքային խորհուրդի պլենումի կամ նախագահության նիստերը նշանակում են բանվորական ժամերին՝ այն հիմնարկությունը, վորտեղ աշխատում են քաղաքային խորհուրդի կամ նրա նախագահության անդամները՝ պարտավոր են նրանց ազատել աշխատանքից՝ անհրաժեշտ ժամանակով»: Քաղխորհուրդի անդամը պետք ե այնպես դասավորի իր աշխատանքները, վոր արտադրությունը, հիմնարկի աշխատանքները չտուժեն: Յեվ այդ հնարավոր ե, յեթե յուրաքանչյուր քաղխորհուրդի անդամ սրանավորի իր աշխատանքները և նպատակահարմար կերպով դասավորի իր ժամերի սպտադործման խնդիրը:

17. ՔԱՂԱՔԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԵՐԻՑ

Հաճախ յերկարատև ժամանակով քաղխորհուրդի անդամները բակացայում են քաղաքից, հնարավորություն չունենալով մասնակցել ընթացիկ աշխատանքներին: Քաղաքից մեկնելուց առաջ քաղխորհուրդի անդա-

մը պարտաւոր ե հեռախոսով կամ անձամբ հայտնել քաղխորհրդի կազմ-բաժնին այդ առթիւ, նշելով բացակայութեան տևողութիւնը: Կազմբաժնի ինֆորմատորը տվյալ քաղխորհուրդի անդամի հաշվառման քարտի վրա կատարում ե համապատասխան նշանակում, վորպեսզի քաղխորհուրդի անդամի բացակայութեանը նիստերից կամ նրա կողմից այս կամ այն հանձնարարութեանները չկատարելը-համարվի հարգելի:

18. ԾԱՎԱԼԵԼ ՍՈՑՄՐՑՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՅՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ


Քաղխորհուրդի անդամները պետք ե լինեն առաջավոր հարվածայինների շարքերում: Աշխատանքի լավագույն ցուցանիշների համար պայքարելու նպատակով նրանք պետք ե իրար հետ կնքեն սոցմրցման պայմանագրեր: Այդ պայմանագրերը չպետք ե ձևական բնույթ կրեն, այլ պետք ե հանդիսանան խոշորագույն խթան աշխատանքները լավագույն կերպով կազմակերպելու համար: Սոցմրցման պայմանագրով քաղխորհուրդի անդամը պետք ե իր վրա առնի հետևյալ պարտականութեանները՝ 1. լինել հարվածային արտադրութեան մեջ, 2. պայքարել արդֆինպլանների քանակական և վորակական ցուցանիշների համար, 3. ժամանակին և պարտաճանաչ կերպով մասնակցել քաղխորհրդի, նրա սեկցիաների, պատիմբակների, բրիգադների աշխատանքներին, 4. ժամանակին և վորակով կատարել քաղխորհրդի նախագահութեան, սեկցիաների, բաժինների հանձնարարութեանները: 5. Գործնականապես մասնակցել քաղաքի սահմաններում տարվող այս կամ այն աշխատանքներին, դրա համար տրամադրելով տարվա ընթացքում վորոշ որեր. 6. վորպես ամրացված անդամի մասնակցել տվյալ հիմնարկութեան և ձեռնարկութեան աշխատանքների բարելավմանը և նկատված բացերի վերացման ուղղութեամբ ձեռք առնել համապատասխան միջոցներ և այլն:

Քաղխորհուրդի յուրաքանչյուր անդամ պետք ե հիշի ընկ. Ստալինի խոսքերը. «Սոցիալիստական մըր-

ցությունն ասում է, ոգնիր յետ մնացողին լավագույնին հասնելու և աշխատիր ձեռք բերել ընդհանուր վերելք»:

Քաղխորհուրդի անդամների աշխատանքների լավագույն դրվածքը քաղխորհուրդների աշխատանքների աշխուժացման հիմնական նախապայմանն է հանդիսանում: «Բարելավելով և աշխուժացնելով քաղխորհուրդի աշխատանքները,—ասում է ընկ. ՍանՎյանը,—կադմակերպելով լայն հասարակայնություն քաղխորհուրդի աշխատանքների շուրջը, ոգտագործելով տնտեսական հնարավորությունները, ավելի լայն ծավալելով սրբութարական ինքնաքննադատությունը, մենք պետք է կարողանանք տեղից շարժել այս յերկու ամսվա ընթացքում քաղաքի բարեկարգման գործը և պայմաններ ստեղծենք առաջիկա 1934 թ. ավելի լայն աշխատանքներ ծավալելով՝ ապահովել Յերեանը՝ սոցիալիստական առաջնակարգ քաղաքի վերածելու մեծ գործի հաջողությունը»:





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038179

(104)

'367
A $\frac{\pi}{38179}$